

կ'իմանայ առողջութեան յարգը, — այսպիսի երջանկութեան մը ատեն՝ գերդաստանը վտանգի մէջ է. երիկ մարդը իր գործոցը կ'երթայ. կինն ալ իր հաճոյիցը ետեէն կ'ըլլայ. տղաք՝ դայեկայ ու անփոյթ դաստիարակաց ձեռքը լքուած թողուած են. — և ահա աստիկ այն ատեն, յարմար ատենին, վրայ կը հասնի ցաւը: Վիմացդ դնենք բաղդաւոր մայր մը, իրեն շնայլութեանը և գեղեցկութեան օրերուն մէջ. յաջողութիւնք կը հպարտացնեն զինքը, շողովութիւնք կը կուրացնեն. և մինչդեռ ինքզինքը երջանկութեան ծայրը հասած կը համարի, ցաւը մէկէն վրայ կը հասնի: Վիմացդ դնենք հայր մը՝ որ միայն իր նիւթական շահուն աչք տնկած ու փառասիրութեան ետեէ, անհոգ կը թողու զկին և զօրդիս. — մէկէն վրայ կը հասնի ցաւը: Այս երջանիկ հարուածներովն ու վերքերով՝ բարոյական զգացումը ընտանեաց մէջ կը մտնէ, և անտեսութեան ճշմարիտ սահմանը՝ իր բուն մեծութեանը մէջ կ'երևնայ: — Բայց թերևս զրուցեն ոմանք թէ այս հարուածները թէ անմեղաց և թէ յանցաւորաց վրայ միանգամայն կը հասնին: Արդ պատասխանենք թէ այս աշխարհիս վրայ բոլորովին անմեղք չկան: Տարակոյս չկայ որ ցաւը ալ արժանեաց և վրիպանաց հետ՝ ճիշդ համեմատութիւն չունին. և ասիկայ է գլխաւոր պատճառներէն մէկը՝ որով իմաստասիրութիւն և կրօնք կը խոստանան մարդուս զանմահութիւն: Այլտը միշտ պատիժ չէ. շատ անգամ ազդարարութիւն մըն է. և չենք կրնար ուրանալ որ ամէնքնիս ալ ազդարարութեան և խրատուց կարօտ ենք:

Թերևս հարցնեն ոմանք թէ ի՞նչ կը մնայ հապա այն խաղաղութիւնը զոր կը խոստանայիր, և այն ուրախութիւնը զոր իւրաքանչիւր ոք ընտանեաց մէջ կը փնտռէ, և փոխարէն ուրիշ բան չունենար՝ բայց եթէ կարգէ դուրս վիշտեր և տագնապիչ ցաւեր: — Բայն խաղաղութիւնը՝ զոր ընտանեկան կեանքը կու տայ անոնց որ վայելել գիտեն՝ մարդ-

կային խաղաղութիւն մըն է. վրդովեալ, ընդհատ ու սպառնալից խաղաղութեան՝ զինադադարում մը: Աեանքը՝ ասկէ աւելի խաղաղութիւն մը չունի քեզի տալիք: Բայց այս անցաւոր խաղաղութեան ետեէն՝ ուրիշ մը կու գայ, որն որ թէպէտ առջինին ուրախ կերպը չունի, սակայն զինն ալ անկէց անհամեմատ վեր է. համբերութեան, համակամութեան, արիութեան և ցաւոց արգասիք խաղաղութիւն մը:

Հոս խօսքերնիս կ'ուզենք լմնցնել: Ընտանեկան կենաց նկարագիրը ըրինք, առանց բան մը մեծցնելու կամ ծածկելու. նկարագրեցինք բարիքը, վտանգներն և փորձերը: Այն մեծ բանին նկարագիրը՝ այս կերպով ընելու է. վասն զի մեծ են անոնք՝ ոչ միայն գեղեցիկ և հրապուրիչ ըլլալուն համար, այլ մանաւանդ այն պատճառաւ՝ որ իրենց ահաւոր և դժուարին կողմն ալ ունին: Հաճոյականը՝ թէ որ կը հրապուրէ զերևակայութիւն, ահաւորն ալ խթան մըն է ի քաջալերութիւն:

ԲԱՐՈՅԱՎԷՊ

Ամօրով արքեցոսքնեկ ետ կենալու օրինակ մը:

Վաղղիոյ քաղաքի մը գլխաւոր ատենակալներէն մէկը շատ տարի սիրով և ուրախութեամբ ապրելէն ետքը իր ամուսնոյն հետ, յանկարծակի անդրադարձաւ որ անիկայ օկսեր է սովորութիւն ընել չափազանց ոգելից ըմպելիքներ խմելու: Արտանց տխրելով ամբասիս վրայ, ուղեց ճարը տեսնալ. քանի մը անգամ ըստ տեղւոյն և մեծ վարպետութեամբ այնպիսի գիտողութիւններ ըրաւ իր կնոջն առջև, որ կարենալ հասկնալ անիկայ ու ինքզինքն ուղղել. սակայն օգուտ մը չտեսնուեցաւ վրան, ընդ հակառակն անկէց ետք աւելի զգուշաւոր կերպով կը շարժէր որպէս զի երիկը ամենալին չտեսնէ ի

արբեցութիւնը : Այս աշխատէս ծածկաբար գոհ ընելով իր հակամիտութիւնը , տիրացաւ ու զօրացաւ ասիկայ իր սրտին մէջ և բուռն կիրք մը դարձաւ . անանկ որ՝ որովհետեւ չէր կրնար ամէն անգամ ինքնիրեն ըմպելիք գտնալ իր մոլութեանը հետեւելու համար , իր աղախիններէն մէկուն ապաւինեցաւ , որ գաղտուկ օդի կը գնէր իրեն :

Այս աստիճանի անկարգութեան բանը հասած տեսնելով էրիկը , որ ճշմարտապէս գութ ու գորով ունէր անոր վրայ , առանց աղաղակի ու շփութութեան՝ զարմանալի ու սովորականէ դուրս կերպ մը բանեցուց զանկայ բռնկելու համար : () զիով լեցուն տակաւի մը բերաւ տուն , և այնպիսի խուցի մը մէջ դրաւ զայն , ուր առանց ծառաներէն տեսնուելու կրնար երթըցուիլ . ետքը իր կնոջ քովը գնաց , և վերոյիշեալ սենեկին բալիքը ձեռքը տալով՝ ծանր կերպով մը ըսաւ . « Այս թուն , քու սիրած ըմպելիքէդ առատ պաշար մը բերի , որպէս զի ասկէց վերջը չըննադատուիս գաղտուկ օդի գնել տալու քու աղախնոյդ . և երբոր այս առաջին պաշարը լրննայ , ինծի իմաց տուր : Արովհետեւ կ'ուզեմ որ գոնէ ես միայն գիտցող ըլլամ այն ախտին , որն որ նախատինք կ'ընէ քեզի , և որ ամենաչար օրինակ մը կրնայ ըլլալ քեզի ծառայողներուն » . . . :

Երկանը այս խօսքերէն , որ խորունկ ցաւով մը զուրցուած էին , շատ մեծ տպաւորութիւն ըրին կնոջը վրայ , և կարեւոր դեղն ըրին անոր հիւանդութեանը : Ինչանկ ամօթ մը եկաւ վրան , որ և ոչ աչուրները վեր վերցընելու կը համարձակէր . բայց ետքը քիչ մը աւելի սիրտ առնելով՝ էրկանը ձեռքը սխմեց ու « Երումն կը խնդրեմ քեզմէ , հազար անգամ ներումն կը խնդրեմ , աղաղակեց . ինչուան հիմա քեզի մեծ տհաճութիւն մը պատճառեցի , ինծի համար ամբողջընել տուի զքեզ . սակայն կը խոստանամ որ ասկէց ետքը ակ ոչ երբէք պիտի հանդիպի ասիկայ . աս օրուրնէ սկսեալ ետ կը կենամ այն զը-

զուելի հակամիտութենէն , որ անարգանք է ինծի . և անկէց հեռու կենալու համար բաւական պիտի ըլլայ ինծի այսօրուան տուած դասդ յիշելը » : Այս իրաւցընէ , այս ամօթոյ զգացման հետ միանալով նաեւ կրօնից զօրութիւնը , որուն ինչուան այն ատեն անտարբեր կեցած էր , ատենակալին կիներ անանկ հաստատ սլահեց իր խոստմունքը , որ սկսաւ իբրեւ ժուժկալութեան օրինակ մատնանիշ ցուցուիլ ամենուն :

Զինչ է մարդ , բայց անօթ ջախջախ և գիւրաբեկ , նաեւ խարխուլ՝ որ ոչ եթէ 'ի միրկէ՝ այլ և 'ի գոյզն ալեաց բախեալ քայքայի և ընդհարեալ փշրի : Զինչ է մարդ , բայց մարմին տկար և գիւրեղձանելի , մերկ և անպատսպար 'ի բնէ , այլոց կարօտ օգնականութեան , ամենայն արկածից բախտի նշաւակ , և համայն իսկ իւրով ջնապինդ զօրութեամբն՝ որս և ճարակ գազանաց . գործած թոյլ և լոյծ վեր 'ի վերոյ և եթ առտափայլեալ երևութիւ , անբաւական 'ի տոկ ցրտոյ և ամօթոյ և աշխատութեան , և հանգստեամբն դարձեալ և անգործութեամբ հիւժական : Մնունդ իսկ նորա բազմափայտեղ , մերթ առաւելութեամբ և մերթ նուազութեամբ կերակրոցն փնասի : Պահպանութիւն նորա բազմահոգ և տարժանելի , մեւրացածոյ և առանց հաստատութեան զօրութիւն նորա , յանկարծ երկիւղիւ սատանի և յեղակարծ ձայնիւ ընդոսանու , իւր միայնոյ անպիտան և փնասակար 'ի սնունդ : . . . Ոչ մեծի ինչ զօրութեան պէտք են 'ի կորուստ նորա . հոտ և ճաշակ և աշխատութիւն և տքնութիւն և կերակուր և ըմպելի և այլն ամենայն առ 'ի կեանս պիտանացուք՝ մահաւրիթք են նմա : Ընդ շարժեքն ուրեք՝ իսկ և իսկ իրաւ զգած ընի տկարութեանն իւրում . ընդ ամենայն երկնիւք կեալ ոչ կարէ , 'ի ջուրցն փոփոխելոյ և յանսովոր օգոց և 'ի գոյզն արկածից և 'ի պատճառաց գիւրափնասելի : Կենդանի աղկաղէ , փուտ և տխտաւոր՝ լալեօք եկեալ 'ի կեանս , սակայն ոյր չափ աղմուկս յուզէ , յորպիսի՞ խորհուրդս մտաբերի մոռացեալ 'ի սպառ զիւրոյ տկարութեանն զպայման : Անմահական երկնէ և յաւերժականս , և մինչ 'ի թոռունս և 'ի թոռնեայս դէտ ակն կայ և տնօրէն : Եւ այն ինչ զապագայիցն հոգայ զհեռաւորաց՝ գայ հատանէ մահ զգետնել զնա . զի և անուանեալն այն ծերութիւն զինչ է , բայց սակաւօրեայ ամաց չըջան :

ՍԵՆԵԿԱ